Արձանագրություն 3

«ԳՀԱՊՁԲ-ԱՊՁ-ՁԻԱՀ-19/1» ծածկագրով գնանշման հարցման
ձևով անվադողերի և պահեստամասերի ձեռքբերման գնման
ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ

Անցկացման օրը՝ 27 նոյեմբերի 2019թ.
Անցկացման ժամը՝ 15:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սպարտակ Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Սամվել Մարտիրոսյան Բագրատ Գրիգորյան Մերի Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա.Օհանյանը:

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Սպարտակ Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (27.11.2019թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ «Արպանիվ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և

մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	Գնահատման չափանիշը	Գնահատման արդյունքը
		«Արպանիվ» ՍՊԸ
1.	որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- N 1 և N 2 չափաբաժինների համար «Արպանիվ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Սպարտակ Սարգսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Սպարտակ Սարգսյան)

3.1 «ԳՀԱՊՁԲ-ԱՊՁ-ՁԻԱՀ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով անվադողերի և պահեստամասերի ձեռքբերման գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Սարգսյան	(ստորագրությունը)
Հանձնաժողովի անդամներ՝	Ս.Մարտիրոսյան	(ստորագրություն)
	Բ.Գրիգորյան	(ստորագրություն)
	Մ.Մարկոսյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	(ստորագրություն)ս